ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/92

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝«ՖլայՄի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Գ. Խաչատրյանի, ներկայացուցիչներ՝ Ս. Թամրազյանի, Լ. Մելքոնյանի
«ՖլայՄի» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Մարտիրոսյանի, Ն. Յուզբաշյանի, Է. Անդրեասյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով մեկ անձ, «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ միասին» ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ՖլայՄի» ՍՊԸ-ի, (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 19.11.2019թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ «ՖլայՄի» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերման համար մեկ անձից գնման ձևով «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2 որոշումը վերացնելու և «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.11.2019թ.-ին, իսկ 20.11.2019թ.-ին կայացված որոշմամբ այն ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/92 համարի ծածկագիրը:

16.11.2019թ.-ին և 02.12.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 02.12.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.12.2019թ.-ին:

2. «ՖլայՄի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՖլայՄի» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գնման ընթացակարգն իրականացվել է հետևյալ եղանակով՝ գնանշման հարցում, ծածկագիրը՝ ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20:

Գնման ընթացակարգի առարկան է համարվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերումը՝ համաձայն հետևյալ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի.

Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)՝ 60421400/5, չափման միավորը՝ դրամ, ընդհանուր քանակը՝ մեկ, հասցեն՝ ք. Երևան, 0042 «Զվարթնոց» օդանավակայան, ժամկետը՝ 25.12.2019թ.:

Առարկան՝ ուսումնական միաշարժիչ ինքնաթիռ: Ինքնաթիռի թռիչքային ժամերի քանակը՝ առավելագույնը 201 ժամ 50 րոպե թռիչքային ժամ: Ինքնաթիռը պետք է համապատասխանի ներքոհիշյալ բոլոր պահանջներին:

1. Ինքնաթիռը պետք է ունենա միջազգայնորեն ընդունված տիպի սերտիֆիկատ:

2. Առավելագույն թռիչքային զանգվածը՝ 1500 կգ:

3. Ուժային համակարգի քանակը՝ 1:

4. Թռիչքային անձնակազմի տեղադրությունը՝ 2 օդաչու իրար կողք տեղավորված: Թռիչքների կառավարման համակարգը՝ 2 օդաչուների տեղից բռնիչով կամ շփուրվալով, ուղղության ղեկով, ոտնակներով:

5. Ուղևորային տեղերի քանակը՝ նվազագույնը 2 հոգի:

6. Թռիչքի բարձրությունը՝ ոչ պակաս 3000 մ:

7. Վերթիռի հեռավորությունը՝ ոչ ավել 900 մ:

8. Ինքնաթիռը պետք է համալրված լինի DME հեռավորության չափման դիսպանցիոն համակարգով, VOR նավիգացիոն կայանով, մեկ GPS նավիգացիոն համակարգով, ADF ուղղության ինքնաշխատ որոնման սարքով, մեկ VHF ռադիոկայանով:

9. Պետք է ապահովված լինի օդանավի շահագործման հնարավորությունը գետնի վրա արտաքին օդի ջերմաստիճանի ոչ պակաս -15-ից +35 աստիճանի պայմաններում:

10. Շարժիչը՝ մխոցային:

11. Բաց տարածքում ինքնաթիռի պահպանման համար մատակարարման հավաքածուում պետք է ընդգրկված լինեն ծածկույթներ (չեխոլ) և փականներ:

12. Ինքնաթիռը ուսումնական թռիչքներ իրականացնելու համար պետք է ունենա գործող և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համար ընդունելի սերտիֆիկատներ (գրանցման և թռիչքային պիտանիության սերտիֆիկատներ, աղմուկի և ռադիոկայանի վկայականներ) և համապատասխանի ուսումնական թռիչքներ իրականացնելու համար նախատեսված թռիչքային պիտանիության ապահովման պահանջներին:

13. Ինքնաթիռը պետք է համապատասխան կարգով թույլատրված լինի շահագործման: Համապատասխան փաստաթղթերը դրված լինեն ինքնաթիռի փաստաթղթերի հետ:

14. Մատակարարողը պետք է ապահովի ինքնաթիռի տեխնիկական սպասարկումը:

15. Մատակարարողը պետք է կրի ինքնաթիռի մատակարարման բոլոր ծախսերը, այդ թվում ինքնաթիռի ապահովագրության ծառայությունների, ժամանակավոր պահպանման, ինքնաթիռի առաքման, մաքսատուրքերի վճարման, ինչպես նաև ԱԱՀ-ի վճարումն իրականացնի իր սեփական միջոցների հաշվին: Մատակարարողը պարտավոր է պետական պատվիրատուին ապահովել բոլոր երաշխիքային պարտականությունների կատարումը, ավիացիոն տեխնիկայի և ինքնաթիռ արտադրողի, ներառյալ շահագործման փաստաթղթերի բոլոր փոփոխությունները:

16. Ինքնաթիռի լիցքավորումը պետք է իրականացվի տվյալ տիպի ինքնաթիռի շահագործման ձեռնարկում նշված վառելիքով:

17. Ինքնաթիռի անձնակազմը, ներառյալ օդաչու-հրահանգիչը, ուսանող-օդաչուն, ինչպես նաև երրորդ անձինք պետք է լինեն ապահովագրված:

18. Մրցույթի մասնակիցը իր միջոցներով իրականացնում է հավելյալ ուսումնական վարժանք, եթե կատարվելու է նախորդ ուսումնաթռիչքների ժամանակ օգտագործված «Դայմոնդ 40» ինքնաթիռի փոփոխություն՝ հիմք ընդունելով ARM-AIR CREW GM 1 FCL.710 կանոնակարգը:

19. Մասնակիցը պետք է ապահովի ծրագրի շրջանակում թռիչքների կատարումը իր օդաչու-հրահանգչի միջոցով:

Համաձայն մրցույթի հայտարարության՝ քննարկվող գնման ընթացակարգը «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին 12 սեպտեմբերի 2019 թվականի N 1229-Ն որոշումը և ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի աղյուսակի 32-րդ տողով:

Այսինքն, գնումն իրականացվել է մեկ անձով՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի հիմքով:

Գնման հայտարարությունից բխում է նաև, որ այն հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 18-ի N 2 որոշմամբ, այլ փաստաթղթեր բողոք բերող անձին հասանելի չեն:

Գնման հայտարարությունը և հրավերը հրապարակվել է gnumner.am կայքում, ինչպես նաև ներկայացվել է բողոքը բերող անձին՝ վերջինիս էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով 18.11.2019 թվականին:

Համաձայն Կարգի 71-րդ կետի.

Մեկ անձից գնումների կատարման ժամանակ գործում են սույն կարգի 7-րդ բաժնով սահմանված պահանջները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

3) եթե գնումն իրականացվում է … սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ապա մասնակիցը՝

ա. հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումներ չի ներկայացնում,

բ. ներկայացնում է միայն գնային առաջարկ:

Այսպիսով, համաձայն Կառավարության որոշման Պատվիրատուն մասնակցից կարող էր պահանջել միայն գնային առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Մինչդեռ, համաձայն Հրավերի պահանջների՝ Մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին և դրան կից՝ կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտա¬գործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Ստացվում է, որ հրավերով բացի գնային առաջարկից Պատվիրատուի կողմից պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր, որոնք ներկայացնելու պարտականություն մասնակիցը չունի և որոնք ներկայացնելու պահանջի իրավունք Պատվիրատուն չունի:

Գնման ընթացակարգն իրականացվում է հրավերի հիման վրա և եթե սույն հրավերը կազմվել է իրավական նորմերի պահանջների խախտմամբ, ապա այն չի կարող իրականացվել օրենքով սահմանված կարգով, ընդ որում, եթե մասնակիցը առաջնորդվի իրավական նորմերի պահանջներով և ներկայացնի միայն գնային առաջարկ, ապա վերջինիս հայտը կմերժվի, քանի որ հայտը առերևույթ չի համապատասխանի հրավերին, թեկուզև այդպիսի պարտականություն իրավական նորմերով չէր կարող դրվել մասնակցի վրա: Հետևաբար, որպեսզի գնման ընթացակարգն իրականացվի օրենքով սահմանված կարգով, հնարավոր լուծում է համարվում այն չկայացած հայտարարելը և այնպիսի՝ մրցույթի հրավերի և հայտարարության հաստատումը, որը կբավարարի իրավական նորմերի պահանջները:

Արդյունքում խախտվել է վերը նշված իրավական նորմերը և բողոքը ներկայացնող անձի իրավունքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն.

2. Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

2) . . . հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

7. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:»:

Ելնելով վերոգրյալից, «ՖլայՄի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերման համար մեկ անձից գնման ձևով «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 2 որոշումը վերացնելու և «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշում:

3. <u>«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 20.11.2019թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ-/2/19174-2019 գրությամբ դիմել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ՖլայՄի» ՍՊԸ-ի կողմից 19.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 21.11.2019թ.-ի թիվ 3.10-377 գրությամբ ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 18.11.2019թ. ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20 ծածկագրով մրցույթը իրականացվել է ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 12-ի թիվ 1229-Ն որոշման, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 23-րդ հոդվածի համաձայն՝ բացառիկ հիմքով, հաշվի առնելով անվտանգության տեսակետից կարևորությունը և ժամկետի առումով անհնարինությունը:

Մրցույթը իրականացվել է օրենքով սահմանված կարգով: Հնարավոր մասնակիցներ ներգրավելու համար մրցույթի հայտարարությունը և հրավերը հրապարակվել են gnumner.am կայքում, միաժամանակ ուղարկվել է 5 մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին:

Տեղեկացնում եմ, որ պահանջվող սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է, քանի որ մրցույթի հիմքում դրված է ինքնաթիռ անձնակազմի հետ միասին և գործ ունենք ուսանողների թռիչքային պատրաստվածության դասընթացների հետ, որը ենթադրում է մեծ ռիսկեր՝ ելնելով թռիչքների անվտանգությունից և հանրային շահերից, պետական անվտանգության գործոնից:

Հաշվի առնելով վերոգրյալը բողոքը համարում եմ անհիմն և խնդրում եմ մերժել:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերման նպատակով 18.11.2019թ.-ին հայտարարվել է «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.gnumner.am կայքում և ուղարկվել 5 (հինգ) մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին:

ՀՀ կառավարության 12.09.2019թ.-ի թիվ 1229-Ն որոշման համաձայն՝ «Ավիաուսումնական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը դրամաշնորհն ուղղվել է ուսանողների թռիչքային պատրաստվածության դասընթացների ձեռքբերմանը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի համաձայն:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի (աղյուսակի 32-րդ տող) պահանջներին համապատասխան:

Նույն հրավերով սահմանվել է, որ մասնակիցները պետք է ներկայացնեն նույն հրավերով նախատեսված ծառայության մատուցման համար ռադիոկայանի, գրանցման, թռիչքային պիտանելիության, տիպի և աղմուկի միջազգային սերտիֆիկատներ: Ինչպես նաև մասնակիցները պետք է ներկայացնեն գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն /հավելված 1/, տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների մասին /հավելված 1.1/, գնային առաջարկ

/հավելված 2/ և տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող սերտիֆիկատների մասին /հավելված 3/:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ՖլայՄի» ՍՊԸ-ի կողմից 19.11.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոգրյալ նորմերի դրույթներով պայմանավորված, Բողոքներ քննող անձն արձանագրում է, գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք

հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գնում կատարելու ընթացակարգերն են՝ մեկ անձից գնումը:

Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել.

3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով.

4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը.

5) գնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Կարգի 71-րդ կետի համաձայն՝ մեկ անձից գնումների կատարման ժամանակ գործում են սույն կարգի 7-րդ բաժնով (պայմանագրի կնքումը) սահմանված պահանջները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) եթե գնումն իրականացվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ», «գ», «դ» և «ե» պարբերություններով նախատեսված հիմքերով, ապա՝

ա. հրավերը գնման հայտում նշված մասնակիցներին ուղարկվում է միաժամանակյա ծանուցմամբ՝ այն նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում,

բ. հայտերի ներկայացման ժամկետը սահմանվում է ոչ շուտ, քան հրավերն ուղարկվելու օրվանից երկու և ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր,

գ. մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, համատեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով, գնային առաջարկ, հրավերով նախատեսված՝ մասնակցության իրավունքը հիմնավորող փաստաթղթեր, ապրանքների գնման դեպքում՝ ապրանքի ամբողջական նկարագիր,

դ. մասնակիցը հայտը քարտուղարին (գնումների համակարգողին) է ներկայացնում հրավերով սահմանված կարգով՝ փակ ծրարով, եթե գնման գործընթացն իրականացվում է թղթային եղանակով,

ե. պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում հրավերը չի հրապարակվում տեղեկագրում,

զ. ընտրված մասնակիցը ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովում.

2) եթե գնումն իրականացվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կամ սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության հիման վրա, ապա՝

ա. մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում,

բ. ընտրված մասնակիցը որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովում ներկայացնում է, եթե գնումը կատարվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա,

գ. մասնակցի հայտը ներառում է գնային առաջարկը, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ գնումը սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության հիման վրա կատարվելու դեպքում նաև իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի համապատասխանության մասին.

3) եթե գնումն իրականացվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կամ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ապա մասնակիցը՝

ա. հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումներ չի ներկայացնում,

բ. ներկայացնում է միայն գնային առաջարկ:

Կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 32-րդ տողի համաձայն՝ գնման ընթացակարգը կազմակերպելիս, օրենքի 3-րդ բաժնով (գնում կատարելու ընթացակարգերը եվ դրանց կիրառման պայմանները) նախատեսված պայմաններից բացի, պետք է հաշվի առնել, որ գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով՝ ավիացիոն համակարգի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների դեպքում:

Կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ գնումները կարող են կատարվել օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա չկանխատեսված իրավիճակների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում՝ բացառությամբ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքերի: Ընդ որում, հրատապ է համարվում այն կարիքը, որը պետք է ամբողջ ծավալով բավարարվի՝ պայմանագրի կատարման արդյունքն ամբողջ ծավալով ընդունվի գնման պահանջի ծագման օրվանից մինչև 80 օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ հրատապ համարվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվեն այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ Օրենքի 23-րդ հոդվածով սահմանվում են այն դեպքերը, որոնց առկայության դեպքում է հնարավոր գնումն իրականացնել, իսկ արդեն Կարգի 71-րդ կետով Օրենքի 23-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր դեպքի համար հստակ սահմանվում են մեկ անձից գնումների կիրարկման կարգը:

Այսպես՝

Եթե գնումն իրականացվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բ», «գ», «դ» և «ե» պարբերություններով նախատեսված հիմքերով, ապա՝

ա. հրավերը գնման հայտում նշված մասնակիցներին ուղարկվում է միաժամանակյա ծանուցմամբ՝ այն նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում,

բ. հայտերի ներկայացման ժամկետը սահմանվում է ոչ շուտ, քան հրավերն ուղարկվելու օրվանից երկու և ոչ ուշ քան հինգ աշխատանքային օր,

գ. մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, համատեղ գործունեության պայմանագիր, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են կոնսորցիումով, գնային առաջարկ, հրավերով նախատեսված՝ մասնակցության իրավունքը հիմնավորող փաստաթղթեր, ապրանքների գնման դեպքում՝ ապրանքի ամբողջական նկարագիր,

դ. մասնակիցը հայտը քարտուղարին (գնումների համակարգողին) է ներկայացնում հրավերով սահմանված կարգով՝ փակ ծրարով, եթե գնման գործընթացն իրականացվում է թղթային եղանակով,

ե. պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում հրավերը չի հրապարակվում տեղեկագրում,

զ. ընտրված մասնակիցը ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովում:

Եթե գնումն իրականացվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կամ սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության հիման վրա, ապա՝

ա. մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում,

բ. ընտրված մասնակիցը որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովում ներկայացնում է, եթե գնումը կատարվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա,

գ. մասնակցի հայտը ներառում է գնային առաջարկը, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը, իսկ գնումը սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության հիման վրա կատարվելու դեպքում նաև իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի համապատասխանության մասին:

Եթե գնումն իրականացվում է օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կամ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի հիման վրա, ապա մասնակիցը՝

ա. հայտի, ինչպես նաև որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումներ չի ներկայացնում,

բ. ներկայացնում է միայն գնային առաջարկ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերման նպատակով 18.11.2019թ.-ին հայտարարված «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգը հրապարակվել է www.gnumner.am կայքում և ուղարկվել 5 (հինգ) հնարավոր մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին, այդ թվում՝ Բողոք ներկայացրած ընկերությանը:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի (աղյուսակի 32-րդ տող) պահանջներին համապատասխան:

Նույն հրավերով սահմանվել է, որ մասնակիցները պետք է ներկայացնեն նույն հրավերով նախատեսված ծառայության մատուցման համար ռադիոկայանի, գրանցման, թռիչքային պիտանելիության, տիպի և աղմուկի միջազգային սերտիֆիկատներ: Ինչպես նաև մասնակիցները պետք է ներկայացնեն գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն /հավելված 1/, տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող տեխնիկական միջոցների մասին /հավելված 1.1/, գնային առաջարկ /հավելված 2/ և տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող սերտիֆիկատների մասին /հավելված 3/:

Սույն գործում առկա փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման առարկան հանդիսանում է «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերումը, իսկ Կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի (աղյուսակի 32-րդ տող) դրույթները վերաբերում են Ավիացիոն համակարգի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծառայությունների ձեռքբերմանը:

Վերոնշյալից հետևում է, որ «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգը չէր կարող հայտարարվել Կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի (աղյուսակի 32-րդ տող) դրույթների հիման վրա:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերը նշված դրույթների հիման վրա հանձնաժողովը կարող էր պայմանագիր կնքել առանց հրավերը հրապարակելու և հնարավոր հինգ մասնակցի այն ուղարկելու միջոցով:

Այն դեպքում, երբ Պատվիրատուն հրավերը հրապարակելով տեղեկագրում և ուղարկելով հնարավոր հինգ մասնակիցների՝ իրացրել է Կարգի 23-րդ կտի 5-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համադրելով վերը նշված հանգամանքները Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սկզբունքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի փոխարեն նույն կետի 5-րդ ենթակետի կիրառումը, թե բողոքը ներկայացրած Ընկերության և թե այլ մասնակիցների համար մրցակցության հավասար պայմանների որևէ սահմանափակում, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չեն առաջացրել: Ընկերությունը զրկված չի եղել մասնակցության հայտ ներկայացնելու իրավունքից, որպիսի պայմաններում Ընթացակարգը չկայացած հայտարարելու համար բավարար հիմքեր առկա չեն:

Վերոնշյալները հիմնավորվում են այն պարզ փաստերի հաշվառմամբ, համաձայն որոնց «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ինքնաթիռի վարձակալություն անձնակազմի հետ» ծառայության ձեռքբերման նպատակով 18.11.2019թ.-ին հայտարարված «ԱՈՒԿ-ՄԱ-ԾՁԲ-19/10/20» ծածկագրով գնման Ընթացակարգի հրավերով սահմանված լինելով, որ գնման ընթացակարգը հայտարարվում է, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.09.2019թ.-ի թիվ 1229-Ն որոշման 2-րդ կետը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի (աղյուսակի 32-րդ տող) պահանջներին համապատասխան, Պատվիրատուն, այնուամենայնիվ, Ընթացակարգի հրավերը հրապարակել է www.gnumner.am կայքում և ուղարկվել 5 (հինգ) մասնակիցների էլեկտրոնային փոստի հասցեներին, այդ թվում՝ Բողոք ներկայացրած ընկերությանը՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների պահանջների կիրառումը (գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընկերության կողմից բողոքով ներկայացված փաստական հանգամանքներն անհիմն են, քանի որ արձանագրված գնումների օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները կրում են զուտ ձևական բնույթ և չեն հանգեցնում գնումների օրենսդրության սկզբունքների պահանջների խախտմանը, իսկ Պատվիրատուի գործողությունները ուղղված են եղել ապահովելու Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՖլայՄի» ՍՊԸ-ի կողմից 19.11.2019թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2019/92 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**